

ՍՈՒՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ՍՈՒՐԱՑԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ*

Բանալի բառեր. Մուրացան, մուրացանագիտություն, հայկական մամուլ, ռոմանտիզմ, ռեալիզմ, աշխարհայացք, գրեհիկ հասարակաբանություն, Ա. Տերտերյան, Ս. Սարինյան, Վ. Հակոբյան, մուրացանագիտության մեթոդյալ գարգացում:

Հայ գրականագիտության պատմությունը դարերի ընթացքում զարգացման արդյունավետ ճանապարհ է անցել՝ ունենալով ուսանելի նվաճումներ: Այն մոր հունի մեջ մտավ առանձնապես 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ ասպարեզի վրա էին Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Ստ. Լիսիցյանը, Ն. Աղբալյանը և այլ գրական գործիչներ: Այդ ժամանակաշրջանում գրական հայացքների նկատելի ձևավորումը առնչվում է հայ մամուլի ակտիվ գործունեությանը: Այդ ուղղությամբ ակնառու դեր խաղացին «Հյուսիսափայլ», «Մշակ», «Մեղու», «Թատրոն» և այլ թերթեր, «Բազմավեպ», «Արարատ», «Արևմուտք», «Փորձ», «Մուրճ», «Տարագ» և այլ հանդեսներ: Ուշագրավն այն էր, որ գեղարվեստական գրականության աննախընթաց հարստացմանը զուգահեռ իր խոսքն էր ասում գրական քննադատությունը՝ սկզբնավորելով այն գիտությունը, որը վերաբերում է կոնկրետ ստեղծագործող անհատականությունների հունձքին: Այսպես, XIX դարի վերջին ու XX դարի սկզբին հիմնադրվեցին Աբովյանագիտությունը, Նալբանդյանագիտությունը, Մունդուկյանագիտությունը, Աղայանագիտությունը, Թումանյանագիտությունը և այլն: Իհարկե, ոչ բոլոր դեպքերում էին, որ կամավոր գրողների երկերը գնահատվում էին ըստ էության, քանզի հաճախ նկատվում էին քաղաքական, հասարակական, մշակութային տարբեր դիրքորոշումների արտահայտություններ: Կարևորն այն է, որ գրականագիտության այդ բնագավառն արդեն իրեն զգացնել էր տալիս:

Ինչ վերաբերում է Մուրացանագիտությանը, գոհունակությամբ կարող ենք նշել, որ այն ունեցել է խոսուն ընթացք: Եվ, դա հասկանալի է: Մուրացանը ոչ միայն տաղանդավոր գրող էր, այլև նորարար, ճանապարհ բացող, ուսուցիչ, որի լույսը երբեք չի աղոտացել, ընդհակառակը, գնալով ավելի շողարձակ է դարձել ստեղծագործող մոր սերունդների համար: Մուրացանը գրական ասպարեզ է իջել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ բուռն վերելք էր ապրում հայկական ռոմանտիզմը: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել Բաֆու դերը, որի ստեղծագործությունը ռոմանտիզմի գրականության փայլուն հաղթանակներից է: Բաֆուց հետո Մուրացանն էր, որ դարձավ ուշ ռոմանտիզմի խոշոր ներկայացուցիչը հայ իրականության մեջ:

Մուրացանի ստեղծագործության անսպառ ակունքը կյանքն էր՝ իր բազմաշերտ ընթացքով: Հայոց գյուղերում ու քաղաքներում տեղի ունեցած բոլոր իրադարձություններն արձագանք են գտել նրա բազմաժանր երկերում: Կյանքում ոչինչ չի վրիպել նրա ուշադրությունից, նա միաժամանակ ձեռք է մեկնել ժողովրդի պատմական անցյալին՝ իր երկերում արդիական հիմնախնդիրները քննարկելու և նոր ժամանակների այրող հարցերին ծառայեցնելու միտումով:

*Հոդվածն ընդունվել է 15.01.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրԴՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

Մուրացանի իրեն համարել է տենդենցիոզ (միտումնավոր) գրող: Եվ զարմանալի չէ այդ ինքնաբերականությունը: Ապրելով կապիտալիզմի դարաշրջանում, մեծ գրողը ծանոթ է եղել ժողովրդի տարբեր խավերի սոցիալական դրությանը: Նա համոզված է եղել կապիտալիզմի քննադատությամբ: Ուստի, Մուրացանի ստեղծագործության մեջ ընդգծված երևում է նրա միտումը, ասել է, թե՛ նրա որդիական համակրանքը սեփական ժողովրդի աշխատավորական շրջանների և անձնվեր հայրենասերների նկատմամբ:

Մուրացանի աշխարհայացքի և նրա ստեղծագործական ռոմանտիկական մեթոդի միջև հակասություն չկա: Իր երկերում քննադատելով չարն ու չարությունը, նա ստեղծել է իդեալական իր հերոսների կերպարները:

Ծանոթանալով մուրացանագիտության ընթացքին, նկատում ենք, որ այն միանշանակ չի զարգացել: Առանձին գրականագետներ Մուրացանի գեղարվեստական մեթոդը համարել են ռեալիզմ՝ նկատի ունենալով գրողի գեղարվեստական պատկերների ճշմարտացիությունը:

Ռոմանտիզմի և ռեալիզմի մասին խոսելիս Բելինսկին նշել է դրանց տարբերությունը, միաժամանակ մատնանշել է այն ճշմարիտ փաստը, որ վերջին հաշվով գրողի ընդհանրացնող պատկերներում առկա է ռոմանտիկականը: Ռոմանտիզմի ներկայացուցչի երկերը սերտորեն առնչված են իրականության ճշմարտացի պատկերմանը: Բայց նրանց աշխարհայացքը և ընտրած մեթոդի առանձնահատկությունը թելադրում են այն սկզբունքը, որը հենց ռոմանտիզմի էությունն է: Այսինքն, եթե ռեալիզմը պահանջում է կյանքը ներկայացնել ինչպես որ է, ապա ռոմանտիզմը պարտադրում է պատկերել կյանքի ցանկալի կողմերը: Մուրացանագիտության մեջ հաճախ շրջանցվել է ռոմանտիկ Մուրացանի երկերի մեջ ընդգծված ցանկալին:

Մուրացանին անդրադարձել են 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին հանդես եկած համարյա բոլոր գրաքննադատները: Այս առումով հատկանշական է Արփիար Արփիարյանի գնահատականը Մուրացանի երկերի վերաբերյալ: Սակայն Արփիարյանը արևելահայ գրականության մասին ստեղծած իր դասագրքում, առանձնացնելով իրարից պոեզիան, արձակը, դրամատուրգիան, շրջանցել է ազգային գրականության մեջ եղած այն ընդհանուրը, որը հատուկ է գրական բոլոր երկերին: Ուստի Արփիարյանի մոտ Մուրացանի ստեղծագործությունների գնահատականը ստացվել է միակողմանի: Մուրացանագիտության ընթացքի մեջ առանձնապես կարևոր տեղ է գրավում ականավոր գրականագետ Արսեն Տերտերյանի գնահատականը:

Նա նկատել է, որ Մուրացանը նախքան որևէ երկ գրելը գերազանցորեն ուսումնասիրել է իր նյութը. նա իրականությունը հետազոտել է պատմական վեպ գրողի պես... Այդ բոլոր հատկություններով՝ Մուրացանը, հարկավ, չի դառել ռեալիստ, քանի որ նա երբեք չի տվել «կյանքը ինչպես որ է», այլ այն խմբագրել է իր կանխակալ հայացքների ոգով. նա վերստեղծել է իր դիտած իրականությունը սեփական իդեալների համաձայն:

Պետք է նշել, որ Մուրացանի գեղարվեստական երկերում գրողի իդեալը և իրականությունը երբեք հաշտության եզրեր չեն գտել: Ահա թե ինչու՝ նրա ամբողջ ստեղծագործությունը պարզապես մի բանավեճ է: Նա ստեղծել է հերոսներ, որոնք մշտապես մտավոր ու հոգեկան լարման մեջ են: Արժե այստեղ ընդգծել Ա. Տերտերյանի դիտարկումը դեռևս 1913թ.: Նա գրել է.

«Մուրացանի անձնուրաց հերոսները ներդաշնակ, հարմոնիկ հոգեկան աշխարհ ունին: Նրանց մեջ հավասարապես զարգացած են կամքը, զգացմունքը և միտքը: Մարդ զարմանում է, երբ լսում է նրանց խոսքերն ու վեճը. ի՞նչ խելք, ի՞նչ մտքի ճկունություն և խորաթափանց ներքնատեսություն: Մուրացանի սիրած հերոսները երկաթե լոգիկա ունին, որոնք ոչ միայն զգացմունքների ծով են, այլև

մտքերի: Եվ վա՛յ նրանց, ովքեր կընկնեն այս հերոսների ջախջախիչ քննադատության հարվածների տակ»: (1)

Մուրացանագիտության զարգացման գործում քիչ ջանքեր չի գործադրել հայտնի հայագետ Լեոն: Թեկուզ նա որևէ քաղաքական կուսակցության անդամ չի եղել, սակայն իր քաղաքական դավանանքով կանգնած է եղել մշակականների, ասել է, թե՝ հայկական բուրժուական լիբերալիզմի դիրքերում: Հենց իր այս դիրքերից էլ նա գնահատում է ոչ միայն Մուրացանին, այլև մյուս գրողներին: Նա եկել է մի եզրակացության, որ հայ գրականության միակ իշխող թեման պետք է լինի ազգային ազատագրական պայքարը: Կառչելով այս գաղափարին՝ նա նույնիսկ 20-րդ դարի սկզբին պաշտպանում էր այդ սկզբունքը, չնկատելով, որ ինքը հետ է մնում կյանքի նոր պահանջներից: Ահա, թե ինչու նա ամբողջության մեջ չէր կարող ճիշտ արժևորել ոչ միայն Մուրացանի, այլև Հ. Թումանյանի, Վ. Տերյանի երկերը:

Պատահական չէ, որ Վ. Տերյանը իր դժգոհությունն է հայտնել Լեոնի գրական ընկալումների վերաբերյալ:

Սովետական 70 տարիների ընթացքում Մուրացանի երկերը ուսումնասիրության առարկա դարձան հանրակրթական դպրոցներում և բուհերում:

Հայտնի են Ա. Տերտերյանի «Հայ կլասիկներ», Վ. Պարտիզունու «Մուրացանի կյանքը և ստեղծագործությունը» աշխատությունները: Հանրակրթական դպրոցի դասագրքերում հանդես են եկել Մ.Սկյանը, Հր. Թամրազյանը: Ծանոթանալով նրանց դիտարկումներին ու գնահատականներին, զգում ես գռեհիկ հասարակաբանության ազդեցությունը անմահ գրողի հավերժախոս երկերի արժևորման վրա:

Ելնելով գրականության վերաբերյալ լեհիյան գաղափարաբանությունից, մեր այդ անվանի գրականագետները քննադատում են Մուրացանին, թե նա իբր չի տեսել կապիտալիստական հասարակական կացութաձևի նեխվածությունը, ուստի շրջանցել է բանվոր դասակարգի առաջատար ուժը սոցիալական արդարության համար մղվող պայքարում:

Անցյալի գրական ժառանգությունը գնահատելու հիմնական գործոնների մասին ժամանակին իր ուսանելի խորհուրդն է տվել Վ. Ի. Բելինսկին: Նա գրել է. «Բացառապես գեղագիտական տեսակետը, ինչպես և ունեն մի միակողմանիություն, միշտ էլ կեղծ հետևությունների է հանգեցնում, և այդ պատճառով, գրականության մասին դատելիս, բացի գեղագիտական տեսակետից, պետք է նաև պատմական տեսակետ»:(2)

Դժվար չէ նկատել հանճարեղ գիտականի կարծիքը՝ պատմականության վերաբերյալ: Այս խորհուրդի շրջանցումն էր, որ դուռ էր բացում գռեհիկ հասարակաբանության առջև:

Բերենք մի հատված անվանի գրականագետ Հր. Թամրազյանի վերլուծական խոսքից. «Մուրացանը 19-րդ դարի վերջի գյուղական կյանքի նշանավոր պատկերահաններից է: Նա ցավով նկատում էր, որ կապիտալիզմի պայմաններում գյուղը քայքայվում է: Ազգության հիմքը համարելով՝ գյուղացիությունը՝ գրողը երազում էր կանգնեցնել կապիտալիզմի մուտքը դեպի գյուղ և գավառ: Պատմական առումով սա միամիտ տեսակետ էր, մոլորություն: Մուրացանը չէր ըմբռնում հասարակության զարգացման օրինաչափ ընթացքը, չէր տեսնում, որ ազգությունը տնտեսապես, հոգեբանությամբ, լեզվով ու մշակությամբ առավելապես կազմակերպվում էր կապիտալիզմի շրջանում: Բայց նա շատ լավ էր տեսնում հայկական գյուղի սոցիալական թշվառությունը, ժողովրդի ճորտական կախումը չինովնիկներից, վաշխառուներից ու ցեցերից:

Այստեղից էլ սկիզբ են առնում նրա աշխարհայացքի հակասությունները: Մի կողմից գրողն առաջ է քաշում կապիտալիզմի առաջընթացը կանգնեցնելու և

գյուղը նրա հարվածներից փրկելու, այսինքն՝ ազգության հիմքը պահպանելու ռոմանտիկական ծրագրեր, մյուս կողմից դրսևորում է ատելություն կապիտալիզմի նկատմամբ և սեր դեպի ժողովուրդը: Մուրացանը խոր ցավով պատկերել է ժողովրդի ծանր վիճակը, սոցիալական ողբերգությունը, գյուղի բարոյական աղետները, հանդես գալով որպես զգաստ ռեալիստ: Բայց դրա հետ միասին, որպես ռոմանտիկ միամտորեն կարծում էր, թե ժողովրդին կարող են փրկել միայն անձնագոհ ու կրթված անհատները, եթե անձնվիրաբար լուսավորություն տարածեն գյուղում, գիտելիքներով օգնեն հարստահարվող գյուղացուն»: (3)

Գրականագետի նման դիտարկումն ու գնահատականը բխում է գեղարվեստական գրականության վերաբերյալ դասակարգայնության ու կուսակցականության լենինյան սգրմունքներից: Ոչ միայն այդ: Սոռնալով, որ անցյալի նշանակալից երևույթները, իրադարձությունները, անհատականությունների գործունեությունը պետք է գնահատել պատմականորեն, ընդհակառակը, գրականության կուսակցականության գաղափարը դարձրել են անցյալը գնահատելու ուսմունք ու լուսարձակ: Ահա, հենց այս գաղափարաբանության հրամայականով դիտարկել ու գնահատվել են հայ հզոր դասական Մուրացանի գրական ամբողջ ժառանգությունը, պարտադրելով, որ նա մտածեր այնպես, ինչպես մարքսիստ լենինյանները:

Ոչ միայն հայ, այլև համաշխարհային հռչակավոր դասական գրողներն իրենց քաղաքական, հասարակական, ազգային, մշակութային մտորումներն ու ակնկալիքներն արտահայտել են պատկերավոր խոսքի միջոցով՝ տարբերվելով հասարակական գիտակցության ձևերի երևելի ներկայացուցիչներից, հստակ գիտակցելով, որ վերջապես, հասարակական գիտակցության բոլոր ձևերի վերջնական նպատակը աշխարհի ճանաչումն ու աշխատավորական լայն զանգվածների սոցիալական վիճակի բարելավումն ու մարդկային հավասար իրավունքների ստեղծումն ու փայփայումն է: Մի կողմ թողնելով ականավոր դասականների երկերի ենթաբնագրային առաջադիմական, մարդասիրական արժարժանները սովետական գրականագետները սխալ եզրակացություններով են գնահատել մեծ արվեստագետների աշխարհայացքը, ստեղծագործական մեթոդը և գրական ժառանգությունը: Այդպես են վարվել աշխարհահռչակ Դոստոևսկու, Լև Տոլստոյի և այլ մեծությունների հետ, այդ նույն են կրկնել Հայաստանում Րաֆֆու, Ռ. Պատկանյանի, Մուրացանի գրական ժառանգության վերաբերյալ:

Մեկ դարից ավելի է, ինչ հայ գրականության երկնակամարում փայլում է Մուրացան-գերաստղը, հայ ժողովրդի հոգևոր աշխարհի ճանփաներում ցանցելով ապրեցնող ու մշտատև գաղափարներ: Կյանքն ընթանում է առաջ, աշխարհում, նաև Հայաստանում, հասարակական կացութաձևերը փոփոխվում են անընդմեջ, մի տեղ կատարելագործվում են, մի ուրիշ տեղ դոփում տեղում, նույնիսկ վերադառնում միջնադար, սակայն կյանքի օրենքները, մարդկային սրտերի տրոփը, երազանքը երբեք չեն փոխվում: Մարդը դիմում է իր հայրենի հողին՝ իրեն սնուցող մորը, նրա հետ առնչվում և՛ ապրուստի միջոցների հայթաթումը, և՛ գալիք սերունդների բարգավաճ ապրուստը, որոնց ճանապարհին, առաջին հերթին, հենց մարդու կատարյալ դառնալու հիմնախնդիրն է, աստծուն նմանվելու ու հասնելու ծարավը, որի արտահայտիչներից մեկը հայ պոեզիայի հսկան է, տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետ Գրիգոր Նարեկացին: Միջնադարից մինչև 21-րդ դար հասարակական կացութաձևերը փոփոխվել ու շարունակում են ձևափոխվել, միևնույն է, դասականների առաջադրած մարդասիրական, աստվածահաճ գաղափարները՝ արժարժաված գեղարվեստական կերպարների միջոցով, չեն խուճա-

նում, սերունդների համար ծառայում են որպես դաս ու խորհուրդ: Այս դիտակետից էլ հենց պետք է գնահատել նաև Մուրացանի գրական ժառանգությունը: Այս ուղղությամբ ուսանելի երևույթ է ակադեմիկոս, արժանահիշատակ Սերգեյ Սարինյանի մուրացանագիտությունը:

Ճշմարտությունը պահանջում է նշել նրա մոտեցումներում եղած գռեհիկ հասարակայնությունը և առկայությունը մի քանի տարի շարունակ, սակայն կյանքի վերջին տարիներին, ասել է թե անկախության շրջանի գրական մտորումներում նա կրկին ու կրկին անդրադառնում էր Մուրացանի կյանքին ու գրական ժառանգությանը և իր մտքի լուսարձակով վերագնահատում անմահ գեղագետի և՛ երկերը, և՛ նրա հայացքները՝ նրա աշխարհայացքի ստեղծագործական մեթոդի գույքահեռներով:

Այսպես, նա ընգծում է, որ Մուրացանի խառնվածքը շատ կողմերով է պայմանավորվել նրա արվեստի ռոմանտիկական սկզբունքով: Սարինյանն իր խոսքը համեմտում է Մեծն Իսահակյանի հետևյալ դիտարկումով. «Մուրացանը իր տանջված, տխուր կյանքում մի մխիթարություն ունի, իր գրադարանը, ուր մոռանում է նա իր մենակությունն ու տխրությունը և ապրում իր սիրած հերոսների հետ, իր երագների, տենչերի, իր պաշտած գաղափարների աշխարհում»: (4)

Մուրացանի գեղարվեստական երկերը գնահատելիս, բազմալստակ գրականագետը նախ ներկայացնում է նրա ապրած ժամանակաշրջանը, նշում դարաշրջանի կարևոր սոցիալական, քաղաքական, հասարակական, ազգային հիմնախնդիրների խաչներուկը և այդ համայնապատկերի վրա բնութագրում նրա բազմաժանր երկերը: Սարինյանն էջ առ էջ, լուրջ գիտնականի հմտությամբ ու ներքնատեսությամբ քննարկում ու արժևորում է Մուրացանի երկերը՝ հայ գյուղի, եկեղեցու, կենցաղի, պատմության, գալիքի, ակնկալիքների, ազգային միասնության, ճակատագրի, ժողովրդի բարոյա-հոգեբանական դրսևորումների, նրա առողջ հիմքերի և այլ կարևորագույն գործոնների մասին: Գրականագետն ընդհանրացնում է. «Այնտեղ, ուր վերջանում է մռայլ իրականությունը, երևի սկիզբ է առնում իդեալական աշխարհը, և գեղագետ Մուրացանը գնաց գտնելու այդ աշխարհի համակրելի հերոսներին»: (5)

Այդ հերոսների թիվը շատ-շատ են, որոնք ներկայացնում են հասարակական տարբեր խավերը: Այստեղ է, որ ընդգծվում է Մուրացանի պատմա-փիլիսոփայությունը, որի գնահատականը ևս մատնանշում է Սարինյանը, բերելով հենց Մուրացանի ստեղծած օրինակելի կերպարի՝ Գևորգ Մարգարետունու պատգամը. «Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է. զորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ... սիրով, միությանը, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրանց մեջ հայրենիքի ուժը: Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքներ պիտի խնամե, ինչպես մի հոգատար պարտիզպան, որ ծառի ճյուղերը զորացնելու և նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված և չեն երևում մարդկանց, բայց իրանց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը: Ինչպես որ չի կարող ապրել այն տունը, որ արմատները չորացած են կամ որդնակեր, այնպես և կանգուն չի մնա այն ազգը, որի ընտանիքներում տիրում է ապականություն, որոնցից հալածական է սերը, միությունը, առաքինությունը, և, նամանավանդ, աստծո երկյուղը»: (6)

Ահա, այստեղ է, որ վերջին հաշվով դրսևորում է գեղագետ Մուրացանի աշխարհայացքի, ստեղծագործական մեթոդի լուսառատ արդյունք հանդիսացող մարդու կենսափիլիսոփայությունը՝ ուղղված գալիք սերունդներին:

Մուրացանագիտությունը որպես պատմական երևույթ զարգանում է՝ արտահայտելով նոր սերունդների աշխարհընկալման հրամայականը:

Այս առումով ուշագրավ երևույթ է տաղանդավոր բանաստեղծ, գրականագետ Վ. Հակոբյանի «Մուրացան և Դոստոևսկի. ներքին մարդու պորբեմը» աշխատությունը:

Հմտորեն քննարկելով Մուրացանի պատմափիլիսոփայական աշխարհայեցողությունը, նա գալիս է հետևյալ եզրակացության. «...Որո՞նք են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Դոստոևսկուն և Մուրացանին՝ որպես արվեստագետներ ու անհատներ: Առաջին հերթին, նրանց մարդկային ծայրահեղ զգացմունքայնությունն ու դառն ապրումների էկզալտացիան»: (7)

Այս դիտարկումից անմիջապես հետո Վ. Հակոբյանը համոզիչ փաստարկումներով բնութագրում է ականավոր գրողների թեմատիկ նախասիրություններն ու գեղարվեստական մեթոդները և ընդգծում. «Խիստ տարբեր են ելակետերն ու մոտեցումները. Դոստոևսկու թեման ժամանակի իրադարձություններն են ու կյանքի սոցիալական երևույթները՝ ռեալիստական թանձր գույների մեջ, իսկ Մուրացանը գերադասում է արդիական հարցերին անդրադառնալ անցյալի գեղարվեստական վերարտադրումների միջոցով՝ մարմնավորելով ռոմանտիզմի ամենաբնութագրական գծերը»: (8)

Գրականագիտական այս լուրջ դիտարկումից հետո Վ. Հակոբյանն ընդգծում է, որ թեմատիկ նախասիրությունները չեն խանգարել, որպեսզի Դոստոևսկին պատմական անցքերին տեղ տա նաև իր պատկերակառույցներում, ինչպես և Մուրացանը սկեռուն ձևերով կանգ առնի ապրած ժամանակի առանձին հիմնախնդիրների շուրջ:

Բնականորեն նման դիտարկումը գրականագետին պետք է տանի դեպի գրական կերպարների կերտման այն մեթոդներն ու միջոցները, որոնց գեղարվեստական ուրույն կիրառումների արդյունքում գործող անձինք հանդես են գալիս հոգեկան ապրման ամենաբարձր կիզակետում, բացառիկ էքստրեմալ պայմաններում, հզորագույն կրքերի բախումների մեջ: Այս ճշմարիտ նկատառումից անմիջապես Հակոբյանն եզրակացնում է. «Այս պարագայում արդեն ռոմանտիզմը մերձեցնում է ռեալիզմի սահմաններին, ռեալիզմը՝ ռոմանտիզմի»: (9)

Վ. Հակոբյանը չէր կարող չանդրադառնալ Մուրացանի հերոսների կրքերի բախմանը՝ առանձնապես «Գևորգ Մարգալետունի» պատմավեպում: Նա մատնանշում է Աշոտ Երկաթի և Ասպրամի սիրո պոռթկումը իրավիճակների լարման զագաթնային կետերում, Սահականույշի ներքին դրաման, Սևադայի և Աշոտ Երկաթի բախումը Սևադայի և նրա որդու կուրացումը՝ Աշոտ Երկաթի կողմից, Յլիկ Ամրամի տառապանքը...

Ո՞րն է Մուրացանի հաջողության գրավականը կերպարների կերտման ընթացքի մեջ: Վ. Հակոբյանը հաջողության գաղտնիքը տեսնում է հերոսների հոգեբանության ու կերպարների գեղարվեստական զարգացման ընթացքի մեջ, որոնց տիրապետում էր Մուրացանը: Եվ նկարագրվող իրականությունն ինչքան ճշմարտացի, այնքան համոզիչ ու առինքնող է գրողի խոսքը: Պատմականի արդիական հնչողության փաստի ընդգծումով Վ. Հակոբյանը հաստատում է. «Հենց այս հորիզոնականի վրա էլ բազմապատկվում է «Գևորգ Մարգալետունու» ոչ միայն պատմական, այլև արդիական արժեքը, ժամանակակից հնչողություն ստանում այսօր, երբ գրական հերոսների մեջ (և ոչ միայն) գեղագիտական իդեալի կորուստը գալիքի համար տագնապներ է արձանագրում»: (10)

Գրականագետը չի մոռանում բնության նկարագրությունների կարևորությունը գրական կերպարի հոգեբանական նրբերանգների բացահայտման ու կոլորիտ ստեղծելու առումով: Մատնանշում է Մուրացանի ստեղծագործության պատկերային համակարգը: Ասել է, թե՝ նա կրկին ու կրկին խոշոր տեղ է հատկացնում

գրողի պատկերավոր մտածողությամբ: «Բնությունը,- գրում է նա,- մուրացանյան արվեստում ներկայանում է աստվածահայտնության գաղափարի ու առաքելության մեջ՝ շաղախված անթաքույց մարդասիրությամբ»: (11)

Վ. Հակոբյանը հետաքրքիր բացահայտումներ է կատարում նաև Դոստոևսկու և Մուրացանի անհատական խառնվածքների աշխարհը ներկայացնելիս: Այս կապակցությամբ նա բերում է Դոստոևսկու և Մուրացանի ստեղծած կերպարների պատկերասրահը, ուր առաջնակարգ տեղ է հատկացված հավատին: Նա նշում է. «Գեղագետներին, բոլոր դարերում էլ, մշտապես հուզել է մարմնի և հոգու «պրորբլենը», խնդիր, որ համաշխարհային իրականության մեջ, սկսած հին աշխարհի մեծ մտածողներից մինչև մեր ժամանակի իմաստասերները, մշտապես վիճահարույց մտքերի տեղիք է տվել»: (12)

Ընդգծելով այս կարևոր փաստը Հակոբյանը նշում է, որ մարմնի և հոգու «առեղծվածային» խնդիրն ինքնատիպ լուծում է տվել Մուրացանն իր պատմավեպում: Այսպես, տանջվում են Ասպրամի, Աշոտ Երկաթի, Սահականույշի, Սևադայի, Տիկ Ամրամի մարմինն ու հոգին: Ու պատահական չէ, որ Մուրացանի մի շարք հերոսների անընդհատ հետևում է փրկչի հայտնության առասպելը: Այստեղ գրականագետը բերում է Գևորգ Մարգարետունու խոստովանությունը. «Ես հույս դրի Աստծո և իմ կամքի վրա, և, ինչպես գիտեմք, հաղթեցի ամեն դժվարություն, ցույց տվի աշխարհին, թե ինչ կարող է ամեն մի մարդը, երբ նրան ոգևորում է զգացմունքներից զանվագույնը՝ հայրենիքի սերը: Ձեզանից ամեն միմը թող զինվի այն հավատով, որ ունեի ես դեպի հայրենյացս ապագան, այն սիրով, որ տածում էի դեպի իմ եղբայրները և այն հույսով, որ դրել էի Աստծո վրա, և կտեսնեմք, որ անկարելին կարելի կդառնա, և արգելքները իրանք իրենց կվերանան, և վտանգներն անհետ կկորչեն: Ամենից ավելի սիրեցեք միությունը, որովհետև դա այն ուժն է, որ լեռներ է պատառում, ամբարտակներ է կործանում, գետերի ընթացք է կասեցնում: Սովորեցեք զոհել այդ միությանը ամենը՝ ինչ-որ ունիք՝ աշխարհում թանկագին. և նա կբերի ձեզ և ձեր որդոց այն երջանկությունը, որին շատերն են որոնում, բայց շատ քչերն են ժառանգում»: (13)

Դժվար չէ նկատել Մուրացանի կենսափիլիսոփայության հավերժական հոլովումը, նրա գործնառական նշանակությունը, որն էլ հենց գտնվում է գրականագետի ուշադրության կենտրոնում: Եվ ոչ միայն այդ: Վ. Հակոբյանը չի շրջանցում ընտանիքի մուրացանյան փիլիսոփայությունը, մատնանշելով անմահ գրողի «էթնիկական պատմափիլիսոփայությունը», ըստ որի ազգի «բարոյական հարստության» հիմքը ընտանիքն է:

Ճիշտ է, մուրացանագիտությունը նկատել է մեծ գրողի ստեղծագործության գաղափարաբանական հենքում տեղ գտած առաքելությունը, սակայն հետաքրքիրն այն է, որ Վ. Հակոբյանն ավելի է կենտրոնացնում գրողի կողմից ընդգծված այդ գաղափարաբանությանը: «Մեծ մտածողին մշտապես հուզել է ժողովրդի ազատության և լուսավորության գաղափարը,- գրում է Հակոբյանը,- մի խնդիր, որ ամբողջ սրությամբ դրված էր նաև մեր «ոսկե միջնադարի» թե՛ պատմական, թե՛ գեղարվեստական բնույթի գործերի հիմքում»: (14)

Դրանով էլ հենց բացատրվում է այն ճիշտ դիտարկումը, որ նկատում է գրականագետը և հաստատում այն ճշմարտությունը, որ Մուրացանի հերոսները գրեթե մշտապես ասպարեզ են գալիս իրենց աստվածային առաքելության մեջ՝ ծառայելու ժողովրդին:

Դոստոևսկու աշխարհայեցողությունը համեմատելով Մուրացանի կենսափիլիսոփայության հետ, ընդգծելով ազգային գրողի երկերի համամարդկային նշանակությունը, Վ. Հակոբյանը կատարում է ընդունելի հետևյալ ընդհանրացումը. «Գեղագետ Մուրացանի աշխարհայացքը, ինչ խոսք, առաջին հերթին արմատներով գայիս է մեր ժողովրդական բառ ու բանի, մեր պատմության հարուստ ակունքներից: Ասենք, հավաքական և վշտից զորեղ մարդու իդեալը: Որքան էլ մենք գրողի մտածողական համակարգում փորձենք եվրոպական մտքի ու տրամաբանության մերձավոր եզրեր գտնել, այնուամենայնիվ, անժխտելի է, որ մեր ժողովուրդը, որպես ամենահինագույն արվեստ ու մշակույթ ունեցողներից մեկն աշխարհում, դարերի ընթացքում իր մեջ խտացրել է այնպիսի հատկանշական

գծեր, որոնք, ի վերջո, հիմք են հանդիսացել «Սասունցի Դավիթ» դյուցազներգության համար, իսկ դա բնականաբար, աշխարհայեցողական ու փիլիսոփայական իր բոլոր առանձնահատկություններով չէր կարող չարտացոլվել այնպիսի մի գրողի երկում, ինչպիսին Մուրացանն է»։ (15)

Վ. Հակոբյանի Մուրացանին նվիրած այս բովանդակալից ու բազմերանգ աշխատության մեջ կարևոր տեղ են գրավում նաև մարդկային խղճի, հոգու, սիրո, ընտանիքի, հավատարմության և այլ կենսահաստատ հասկացություններ, որոնք գտնում են համոզիչ պատասխաններ։

Գրականագետը կարևորել է նաև Մուրացանի ծանոթությունը համաշխարհային, առանձնապես ռուս դասական գրականությանը։

Վ. Հակոբյանն անդրադառնալով Մուրացանի գրական հայացքներին, ճշմարիտ ընդգծումներով հաստատում է հայ գրողի խորքային ծանոթությունը ռուս հանճարեղ գրաքննադատ Բելինսկու ուսմունքին։ Պատահական չէ Մուրացանի հիացմունքը Բելինսկու հանդեպ։ Նա Բելինսկուն համարել է «երևելի կրիտիկոս», «ռուսաց գրականության փայլուն աստղերից մեկը»։

Իր հետաքրքիր աշխատության վերջին մասում Վ. Հակոբյանը բնականաբար զգուշանում և ընթերցողին զգուշացնում է՝ հանկարծ չկարծեն, թե Մուրացանին ներկայացնելով Դոստոևսկու ստեղծագործական աշխարհի զուգահեռներում, կարող է հանգել հայ գրողի ինքնատիպության անտեսմանը։ Հենց այս մտավախությունը ցրելու միտումով, Հակոբյանը նշում է. «Ճանփաբաժանը, ինչպես ասում են, սկսվում է այս կետից, ու մենք առնչվում ենք գեղարվեստական մտքի ու խոսքի միանգամայն տարբեր երևույթների հետ։ Մանավանդ՝ մեծերը մեծ են լինում ոչ թե իրենց նմանություններով ու ընդհանրություններով, որ բնական են, այլ ավելի շատ՝ էական տարբերություններով։ (16)

Ճիշտ և ընդունելի ընդհանրացում։

Վ. Հակոբյանի «Մուրացան և Դոստոևսկի. ներքին մարդու պրոբլեմը» ուսումնասիրությունն ուշագրավ երևույթ է մուրացանագիտության մերօրյա հոլովության, որը զալիս է ընդարձակելու մեծ գրողի ստեղծագործության զնահատման ուղիները՝ զերծ գռեհիկ հասարակաբանության անտեղի և անիմաստ դատողություններից։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տերտերյան, Մուրացանը որպես մտածող և գեղագետ, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 45։
2. Վ. Գ. Բելինսկի, Երկեր 13 հատորով, ԽՍՀՄ ԳԱ հրատ., 1993-59, հ.5, էջ 651-652։
3. Հր. Թամրազյան, Հայ գրականություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար, «Լույս» հրատ., 1996թ., էջ 45
4. Հայ նոր գրականության պատմություն, 5 հատորով, հ. 4, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1973, էջ 126-127։
5. Նույն տեղում, էջ 133։
6. Նույն տեղում, էջ 181-182։
7. «Նորահայտ էջեր վիպասանի կյանքից». «Դիզակ պլուս» հրատ., 2010թ., էջ 38։
8. Նույն տեղում, էջ 38-39։
9. Նույն տեղում, էջ 40։
10. Նույն տեղում, էջ 43։
11. Նույն տեղում, էջ 44։
12. Նույն տեղում, էջ 48։
13. Նույն տեղում, էջ 52։
14. Նույն տեղում, էջ 53։
15. Նույն տեղում, էջ 60։
16. Նույն տեղում, էջ 68։

**ԱՄՓՈՓՈՒՄ
ՍՈՒՐԱՑԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ
ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆ**

Սույն հոդվածում ներկայացվում է մուրացանագիտության զարգացման ընթացքը՝ սկսած 19-րդ դարի վերջից մինչև մեր օրերը:

Նշվում է Ա. Արփիարյանի վաստակն այդ ուղղությամբ, ընդգծվում Ա. Տերտերյանի գրականագիտական լուրջ դիտարկումներն ու գնահատականը մեծ գրողի ստեղծագործության մասին: Նշվում է խորհրդային տարիներին գեղիկ հասարակաբանության ազդեցությունն անմահ դասականի աշխարհայացքի, ստեղծագործական մեթոդի գնահատման վրա: Ուշադրություն է դարձվում ակադեմիկոս Ս. Սարինյանի «Մուրացան» ուսումնասիրությանը, այն համարվում մուրացանագիտության մեջ լուրջ ներդրում:

Հոդվածի հեղինակն անդրադառնում է բանաստեղծ-գրականագետ Վ. Հակոբյանի «Մուրացան և Դոստոևսկի. ներքին մարդու պրոբլեմը» հետազոտությանը, այն գնահատելով որպես նոր խոսք մերօրյա մուրացանագիտության մեջ:

**РЕЗЮМЕ
ПРОЦЕСС РАЗВИТИЯ МУРАЦАНОВЕДЕНИЯ**

СОКРАТ ХАНЯН

Ключевые слова: *Мурацан, мурацановедение, армянская печать, романтизм, реализм, мировоззрение, вулгарный социологизм, А. Тертерян, С. Саринян, В. Акопян, современное развитие мурацановедения.*

В данной статье представлен процесс развития мурацановедения с конца XIX века до наших дней. Отмечается заслуга А. Арпиаряна в этом деле, подчеркиваются серьезные литературоведческие наблюдения и оценки А. Тертеряном произведений великого писателя. Отмечается влияние вулгарного просторечия на оценку мировоззрения и творческого метода бессмертного классика в советские годы. Обращается внимание на исследование академика С. Сариняна "Мурацан", расценивая его как серьезный вклад в мурацановедение.

Автор статьи останавливается на исследовании поэта-литературоведа В. Акопяна "Мурацан и Достоевский: проблема внутреннего человека", характеризую этот труд как новое слово в современном мурацановедении.

**SUMMARY
THE PROCESS OF DEVELOPMENT OF MURATSAN STUDY**

SOKRAT KHANYAN

Key words: *Muratsan, Muratsan studies, Armenian printing, romanticism, realism, viewpoint, vulgar socialism, A. Terteryan, S. Sarinyan, V. Hakobyan, modern development of Muratsan studies.*

The given article represents the process of Muratsan studies development since the end of the XIX century up to now. It points out A. Arpiaryan's contribution to this work and underlines A. Terteryan's serious literary review and assessment on the works of the great writer. It also marks the influence of vulgar socialism on the assessment of the immortal classic's viewpoint and creative method during the Soviet period. The article draws the reader's attention to "Muratsan", the research by academician S. Sarinyan considering it to be of great value for Muratsan studies.

The author of the article highly appreciates the research "Muratsan and Dostoevskiy: A Problem of The Inner Man" by poet and literary man V. Hakobyan regarding it as a novelty in the modern Muratsan studies.